Ա Ռ Ա Ր Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 9-Ի ԹԻՎ ԹԻՎ 35-Ա, 36-Ն-38-Ն, 39-Ա ԵՎ 40-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Թիվ 36-Ն որոշումը նորմատիվ բնույթի դրույթներ չի պարունակում, հետևաբար որոշման հերթական համարից հետո «Ն» տառով նշում կատարելու անհրաժեշտություն չկա:

Որոշման վերնագիրը չի համապատասխանում բովանդակությանը:

Որոշման նախաբանում «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետին կատարված հղումը սխալ է:

Որոշման 1-ին կետը չի համապատասխանում «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետին, համաձայն որի՝ համայնքի ավագանին ոչ թե հաստատում է համայնքի ղեկավարի որոշումը, այլ՝ օրենքով սահմանված կարգով որոշում է կայացնում համայնքի մասնակցությամբ առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների հիմնադրման մասին:

Որոշման 2-րդ կետում նշված «Ստեղծել» բառը փոխարինել «Հիմնադրել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի մասնակցությամբ» բառերով /հիմք՝ ՀՀ ՏԻՄ օրենք 18 հոդված, 1-ին մաս, 15-րդ կետ/: Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի՝ ընկերությունն ստեղծված է համարվում նրա պետական գրանցման պահից: Իսկ նույն օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ընկերության ստեղծումը հիմնադրման միջոցով իրականացվում է Ընկերության հիմնադիր ժողովի որոշմամբ:

Որոշման 3-րդ կետում առկա է բովանդակային կրկնություն: Բացի այդ, 3-րդ կետով ավագանին սահմանել է «Արթիկի արևային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կանոնադրական կապիտալը, իսկ 3-րդ կետի 2-րդ ենթակետով՝ հաստատել այն:

Որոշման 3-րդ կետի 3-րդ ենթակետով ավագանին «Արթիկի արևային էլեկտրակայան» ՓԲԸ-ի բաժնետերերի խորհրդի անդամներ է ընտրել, սակայն համայնքի ավագանին համայնքի մասնակցությամբ ՓԲԸ-ի խորհրդի անդամներ ընտրելու լիազորությամբ օժտված չէ:

Որոշման 3-րդ կետի 3-րդ ենթակետով ընտրված խորհրդի անդամները (բացառությամբ համայնքի ավագանու 2 անդամի) համարվում են հանրային պաշտոն զբաղեցնող անձինք, և վերջիններիս պաշտոնավարումը խորհրդի անդամի կարգավիճակով պայմանավորված առաջացնում է պաշտոնի անհամատեղելիություն: Համաձայն «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները չեն կարող զբաղեցնել իրենց կարգավիճակով չպայմանավորված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման այլ մարմիններում, որևէ պաշտոն՝ առևտրային կազմակերպություններում, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից: Իսկ համայնքի ավագանու անդամը (անդամները) համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի՝ չի կարող միաժամանակ զբաղեցնել որևէ պաշտոն աշխատակազմում և համայնքային ենթակայության կազմակերպություններում:

Համաձայն «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 7-րդ մասի 3-րդ կետի՝ ձեռնարկատիրական գործունեություն է համարվում՝ առևտրային կազմակերպության մասնակից լինելը, բացառությամբ այն դեպքի, երբ առևտրային

կազմակերպության մասնակցի բաժնեմասն ամբողջությամբ հանձնվել է հավատարմագրային կառավարման:

Որոշման 4-րդ կետը հղում է պարունակում հավելվածին, սակայն այն կից ներկայացված չէ, հետևաբար հնարավոր չէ որոշել ՀՀ օրենսդրության համապատասխանության հարցը:

Որոշման վերնագրում նշված է տնօրեն նշանակելու մասին, սակայն որոշման 5-րդ կետով ավագանին համաձայնություն է տվել համայնքի ղեկավարի ներկայացրած առաջարկությանը «Արթիկի արևային էլեկտրակայան» ՓԲԸ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար նշանակելուն: Համայնքի ավագանին տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարի թեկնածության վերաբերյալ համաձայնություն տալու իրավասությամբ օժտված չէ: Համաձան «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասի «է» ենթակետի՝ բաժնետիրական ընկերության հիմնադիր ժողովը ձևավորում է գործադիր մարմին կամ նշանակում է գործադիր մարմնի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար:

Թիվ 38-Ն որոշման նախաբանում «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 90-րդ հոդվածի 4-րդ մասին և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 4-րդ մասին հղում կատարելու անհրաժեշտություն չկար, քանի որ համայնքի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից ֆինանսական միջոցներ չեն ուղղվել համայնքի բյուջեի ֆոնդային մաս:

Որոշման 1-ին կետի «1)»-ին ենթակետում «Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ» բառերից հետո լրացնել «(այլ դասերին չպատկանող)» բառերը:

Թիվ 39-Ա որոշման անբաժանելի մաս համարվող հավելվածը կից ներկայացված չէ:

Որոշումներում չեն պահպանվել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով սահմանված վավերապայմանը, այսինքն՝ անհրաժեշտ էր նշել ստորագրող պաշտոնատար անձի անվան միայն սկզբնատառը:

Կատարող՝ Նաիրա Մարտիրոսյան
*Հեռ. /0312/ 4-90-00*147*
03.08.2020թ.